ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 67/5

08-ը հուլիսի 2023 թվականի

ԵՊՀ ԻՄ-ի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2023-2026թթ.) հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2023-2026թթ.)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2023թ. հուլիսի 08-ի նիստի թիվ 67/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ (2023-2026թթ.)

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողություններից է «Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի» (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ծրագիր կամ Ծրագիր) մշակումը։ Սույն ծրագիրն ուղղված է բարձրացնելու ներքին և արտաքին շահակիցների վստահությունը մասնաճյուղի գործունեության և նրանում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ, ինչպես նաև պահպանելու և զարգացնելու համալսարանական արժեքներից **«ակադեմիական ազատությունը և բարեվարքությունը յուրաքանչյուր ուսանողի և աշխատողի համար»**, ինչը դրված է Մասնաճյուղի գործունեության հիմքում:

Ծրագրի հիմնական թիրախը կոռուպցիոն ռիսկերն են, որոնց կանխարգելման համար առաջարկվում են Մասնաճյուղի ներքին շահակիցների իրազեկվածության մակարդակը բարձրացնող և մասնակցային գործընթացները խթանող, գործընթացների նկատմամբ հսկողությունը խստացնող միջոցառումները։

Ծրագրի նպատակն է.

- ամրապնդել և զարգացնել հակակոռուպցիոն կառուցակարգերը՝ թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև մասնակցային կառավարման միջոցով,

- արմատավորել բարեվարքության կանոնները՝ ձևավորելու ակադեմիական ազնիվ միջավայր,
- կանխարգելել կոռուպցիոն ռիսկերը
- ամրապնդել շահակիցների վստահությունը Մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի նկատմամբ,
- ապահովել ուսանողների բարոյական, իրավական պատշաճ դաստիարակություն:

Ծրագրի խնդիրներն են.

- հակակոռուպցիոն գործունեության հիմնական սկզբունքների և ուղղությունների ամրագրում,
- կոռուպցիոն երևույթների ու վտանգների բացահայտման և դրանց կանխման միջոցառումների նախատեսում,
- ակնկալվող արդյունքների հստակեցում:

Ծրագիրը սահմանում է հակակոռուպցիոն հիմնական գործողությունները, դրանց իրականացման միջոցառումները և ակնկալվող արդյունքները (տես սույն փաստաթղթի բաժին 6-ը):

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում հակակոռուպցիոն ծրագրի իրականացման աշխատանքները համակարգում է հակակոռուպցիոն մշտական հանձնաժողովը:

ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող Հակակոռուպցիոն ծրագիրը ընդգրկում է հետևյալ անձանց շրջանակը՝

ա)վարչական անձնակազմ (ԵՊՀ ԻՄ տնօրենություն, ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների ղեկավարներ),

բ)պրոֆեսորադասախոսական և օժանդակ անձնակազմ,

գ)մասնաճյուղի այլ աշխատակիցներ,

դ) ուսանողներ:

ԵՊՀ ԻՄ-ի հակակոռուպցիոն ծրագրի պահանջները կարող են տարածվել նաև ֆիզիկական կամ իրավաբանական այն անձանց վրա, որոնց հետ ԵՊՀ ԻՄ-ը մտնում է պայմանագրային հարաբերությունների մեջ, եթե դա նախատեսվում է Մասնաճյուղի կողմից տվյալ անձանց հետ կնքված պայմանագրով:

2. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի հիմնական սկզբունքներն են.

1. օրինականություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն ԵՊՀ ԻՄ գործունեության բոլոր ոլորտներում,
2. իրավահավասարություն, ըստ որի ԵՊՀ ԻՄ բոլոր ուսանողները, աշխատակիցները և այլ ներքին և արտաքին շահակիցները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով,
3. մարդու իրավունքների և ազատությունների առաջնահերթություն, հարգանք բոլորի պատվի և արժանապատվության, անձնական և գույքային իրավունքների նկատմամբ, մարդու իրավունքների և օրինական շահերի խախտումների կանխում,
4. սոցիալական պատասխանատվություն, համաձայն որի ԵՊՀ ԻՄ ղեկավար կազմը, բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները բարոյական և իրավական պատասխանատվություն են կրում ԵՊՀ ԻՄ հակակոռուպցիոն ծրագրից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար:

3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ ԻՄ-ում կոռուպցիոն ռիսկեր պարունակող հնարավոր գործընթացները կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

- **Ուսանողի գնահատում և որակավորման շնորհում.** սովորողի

ակադեմիական ձեռքբերումների և ավարտական աշխատանքների/թեզերի ոչ օբյեկտիվ գնահատման դրսևորումներ (դրամի, նյութական բարիքների, ծառայությունների դիմաց կամ միջնորդի օգնությամբ գնահատականի նշանակում, ավարտական աշխատանքների/թեզերի պաշտպանության անցկացում և այլն),

- **Ընդունելություն.** մասնաճյուղի կողմից իրականացվող ընդունելության գործընթացում դրսևորվող ոչ իրավաչափ մոտեցումներ,
- **Ուսանողի շարժունություն.** ուսանողների տեղափոխումների, փոխանակումների, հեռացումների, վերականգնումների և այլ խնդիրների հետ կապված ոչ իրավաչափ մոտեցումներ,
- **Անձնակազմի կառավարում.** ԵՊՀ ԻՄ աշխատակիցների աշխատանքի ընդունման, պաշտոնական առաջխաղացման, վարչական վերահսկողության, մասնագիտական աճի և այլ խնդիրների հետ կապված ոչ իրավաչափ դրսևորումներ,
- **Ֆինանսական կառավարում.** գնումների գործընթացի կազմակերպման և այլ գործառույթների ոչ իրավաչափ իրականացում,
- **Տնտեսական կառավարում.** տնտեսական և օժանդակ ենթակառույցների շահագործման գործընթացների ոչ իրավաչափ իրականացում:

4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղություններն են.

1. ուսումնական գործընթացի և որակավորման շնորհման բոլոր փուլերում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կանխատեսում, կոռուպցիոն վտանգների բացահայտում, կանխում ու գնահատում, դրանց նվազեցմանն ու հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկում,
2. ակադեմիական ազնվության նորմերի և բարեվարքության կանոնների արմատավորում,
3. կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում, կոռուպցիայից զերծ կրթական միջավայրի ապահովում,

4. ԵՊՀ ԻՄ կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, որոշումների ու հրամանների հստակ կատարում, ԵՊՀ ԻՄ-ում ուղղահայաց, ինչպես նաև հորիզոնական ուղղություններով վերահսկողության, համագործակցության և հաշվետվողականության կառուցակարգերի կատարելագործում,

5. ԵՊՀ ԻՄ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հակակոռուպցիոն ծրագրի իրագործման անդրդվելի կամքի, վճռականության ու պատրաստակամության դրսևորում,

6. Ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն, հակակոռուպցիոն միջոցառումների մասնակցային իրագործում և դրանց արդյունավետության ապահովում:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. ԵՊՀ ԻՄ հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում իրականացվելիք հակակոռուպցիոն գործողությունները և դրանց իրականացման հիմնական միջոցառումները.

N	*Հակակոռուպցիոն գործողությունը*	*Միջոցառումների նկարագրություն*	*Ակնկալվող արդյունքներ*
1.	Կրթական գործընթացում կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:	1.1 Ապահովել կրթական ծրագրերի բովանդակության, առարկայական փաթեթների, հարցաշարերի, գնահատման չափանիշների և սանդղակների, գրականության և այլ նյութերի հասանելիությունը: 1.2 Հետևողական իրականացնել քննական գործընթացի արդյունքների հրապարակման միջոցառումներ: 1.3 Կատարելագործել ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման գործընթացը, ապահովել բողոքարկման արդյունավետ գործուն մեխանիզմ: 1.4 Կատարելագործել գրագողության դեմ պայքարի մեխանիզմները: 1.5 Համալրել քննական սենյակները տեսալսողական սարքերով:	1.Մասնաճյուղի պաշտոնական կայքէջում մասնագիտությունների կրթական ծրագրերի համառոտագրերի, իսկ e-learning (Moodle) հարթակում դասընթացների պլանի, քննական հարցաշարերի, գնահատման չափանիշների և սանդղակների, գրականության առկայություն: 2. Քննությունների արդյունքների վերաբերյալ ուսանողներին տեղեկացնելու ներդրված մեխանիզմ: 3.Քննական գործընթացներում ակադեմիական միջավայրի ազնվությունից ուսանողների բավարարվածության մակարդակի աճ: 4.ԵՊՀ ԻՄ ուսանողների՝ առողջ մրցակցային միջավայրից, անվճար և վճարովի հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման /ռոտացիայի/ իրականացման հրապարակայնությանից, օբյեկտիվությունից և արդարությունից բավարարվածության մակարդակի աճ: 5.Տեսալսողական սարքերով համալրված նոր լսարաններ:

2.	Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորում:	2.1. ԵՊՀ ԻՄ աշխատակիցներին և ուսանողներին ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի Ներքին կարգապահական կանոնները, ԵՊՀ ԻՄ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգը, էթիկայի կանոնագիրքը: 2.2. Ներդնել ԵՊՀ ԻՄ-ում աշխատակիցների, ուսանողների կողմից բարեվարքության կանոնների պահպանումը գնահատող կառուցակարգեր: 2.3. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և աշխատակիցների համար կազմակերպել անթույլատրելի արարքների անցանկալի հետևանքներին և դրանց կանխմանը, օրինականության, օբյեկտիվության և սոցիալական արդարության սկզբունքների խորքային ընկալմանը և կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհադուրժողական վերաբերմունքի արմատավորմանը նվիրված հանդիպում-քննարկումներ (ֆոկուս խումբային քննարկումներ, հարցումներ, թեմատիկ միջոցառումներ, դասախոսություններ): 2.4. Ձևավորել ուսանողական հակակոռուպցիոն խմբեր և ուսանողների ներուժն օգտագործել կրթական գործընթացի կոռուպցիոն վտանգներ պարունակող փուլերի նկատմամբ ուսանողական վերահսկողության իրականացման համար: 2.5. Արձագանքել կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ ահազանգերին՝ ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության հայեցակարգով անընդունելի համարվող արարքների բացահայտման և կանխարգելման համար:	1. Ներքին կարգապահական կանոններից, էթիկայի նորմերից, ակադեմիական ազնվության պահպանման սկզբունքներից աշխատակիցների և ուսանողների իրազեկվածության բարձր մակարդակ: 2. Կոռուպցիոն դրսևորումների բացառում: 3. ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության հայեցակարգով անընդունելի համարվող կանխված արարքներ: 4. Աշխատակիցների կատարողական կարգապահության, աշխատանքային բարեխղճության և պատասխանատվության բարձր մակարդակ: 5. Ձևավորված ուսանողական հակակոռուպցիոն խմբեր:

		2.6. Կիրառել կարգապահական և վարչական պատասխանատվության համարժեք միջոցներ ՀՀ օրենսդրությամբ կոռուպցիոն որակվող իրավախախտումների դեպքում, իսկ կոռուպցիոն հանցագործությունների դեպքում՝ դիմել իրավասու մարմիններին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով: 2.7. Կատարել ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում կոռուպցիայի խնդիրներին և դրանց կանխարգելմանը նվիրված հրապարակումներ:	
3	Ներբուհական իրավական ակտերի կատարելագործում:	3.1. Պարբերաբար Վերանայել ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնները և իրավական ակտերը: 3.2. Մշակել և ներդնել ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու գործուն մեխանիզմեր, պարզեցնել և հստակեցնել ընթացակարգերը: 3.3. Մշակել և ներդնել ԵՊՀ ԻՄ գործունեության վերաբերյալ համացանցային http://ijevan.ysu.am կայքին և այլ տեղեկատվական միջոցներին տեղեկատվության հասանելիության ապահովման ընթացակարգեր, սահմանել տեղեկատվության տրամադրման պատասխանատուներ և հստակ ժամկետներ, նախատեսել և կիրառել դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցներ: 3.4. Վերանայել ԵՊՀ ԻՄ-ում գործող հարցումների և դրանց արդյունքների գնահատման, քվեարկությունների և դրանց արդյունքների	1. Նոր խմբագրությամբ ներդրված ներքին կարգապահական կանոններ, փոփոխված և լրացված իրավական ակտեր: 2. Ուսանողների կողմից տարբեր վարչական ստորաբաժանումներին դիմելու գործող ընթացակարգեր: 3. ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող հարցումներից և դրանց գնահատումից, քվեարկություններից և դրանց արդյունքների քննարկումներից բավարարված աշխատակիցներ և ուսանողներ: 4. ԵՊՀ ԻՄ գործունեությանը, որոշումների կայացմանը մասնակցությունից աշխատակիցների և ուսանողների բավարարվածության աճ:

		քննարկման, առաջարկությունների և խնդիրների լուծման վերաբերյալ տարբերակների ներկայացման, որոշումների մասնակցային ընդունման վերաբերյալ գործող մեխանիզմները (կառուցակարգերը), մշակել նոր մեխանիզմներ և կիրառել:	
4	Համալսարանում իրականացվող ընդունելության գործընթացի վերահսկողություն:	4.1 Կատարելագործել ընդունելության գործ-ընթացի վերահսկողության մեխանիզմները: 4.2 Ապահովել ընդունելության գործընթացի ընթացակարգերի կիրառումն ու դրանց պահպանումը: 4.3 Ապահովել մագիստրատուրայի տեղերի հատկացման գործընթացի հրապարակայնու-թյունը:	1. Ընդունելության գործընթացի վերահսկողության կատարելագործված մեխանիզմներ: 2. Ընդունելության գործընթացից բավարարվածության թվի աճ:
5	Հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողների մասնակցության խթանում:	5.1. Կազմակերպել ուսանողական կառույցների անդամների (հանձնաժողովների, գիտական խորհրդի, նախագահության և ՈՒԽ այլ անդամների) համար ուսուցողական դասընթացներ՝ հակակոռուպցիոն արդյունավետ աշխատանքների վերաբերյալ: 5.2. Տարածել ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ և իրականացնել համապատասխան հրապարակումներ: 5.3. Խրախուսել ԵՊՀ ԻՄ-ի մասնակցային կառավարման և հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման գործում ուսանողական ինքնակառավարման մարմինների ակտիվ մասնակցությունը, ձևավորել նրանց հետ արդյունավետ համագործակցության նոր	1. Իրենց իրավունքներից և պարտականություններից, մասնաճյուղում իրականացվող հակակոռուպցիոն գործընթացներից ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացում: 2. ՈՒսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ձևավորված նոր հարթակներ: 3. Համալսարանական կարևոր խնդիրների լուծման գործընթացներում մասնակցությունից ուսանողների բավարարվածության աճ: 4. ԵՊՀ ԻՄ կառավարման գործընթացներին և հակակոռուպցիոն միջոցառումներին մասնակցության համար խրախուսված ուսանողներ:

		հարթակներ, ներգրավել ուսանողներին համալսարանական բոլոր կարևոր խնդիրների լուծման գործընթացներում:	5. Հակակոռուպցիոն ծրագրերում ուսանողների ներգրավածության հաջողված փորձի օրինակներ:
7	Հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մոնիթորինգ, ուսանողներին աշխատակիցների հետ հետադարձ կապի ապահովում	7.1. Իրականացնել հարցումներ ուսանողների և շրջանավարտների շրջանում՝ հարցաշարում ներառելով կոռուպցիայի դրսևորման վերաբերյալ հարցեր։ 7.2. Ներդնել «Տնօրենության հետ ուղիղ էլ. կապ» գործիքը։ 7.3.Իրականացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ սոցիոլոգիական փորձնական ուսումնասիրություն։	1. Հակակոռուցիոն միջոցառումների արդյունքների մոնիթորինգի զեկույց։ 2. «Տնօրենության հետ ուղիղ էլ. կապ» ներդրված գործիք։ 3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ սոցիոլոգիական փորձնական ուսումնասիրության զեկույց։ 4.Հակակոռուցիոն միջոցառումների արդյունավետության բարձրացում։